«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ
ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ԾԱՆՈՒՑՈՒՄ

Հարգելի Բաժնետեր,

«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ (գտվելու վայրը՝ Հայաստան, 0014 Երևան, Ազատության պողոտա, 24/1, այսուհետ՝ Ընկերություն) տնօրենների խորհուրդը «27» մայիս 2025 թ. կայացած նիստում ընդունել է հեռակա կարգով քվեարկությամբ Ընկերության բաժնետերերի տարեկան (հերթական) ընդհանուր ժողով (այսուհետ՝ Ժողով) գումարելու մասին որոշում.

- Ժողովը գումարվում է 2025 թվականի հունիսի 30-ին
- Ժողովը անցկացվելու է հեռակա կարգով:
- Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվել է 27 մայիս 2025 թվականին Ընկերության բաժնետերերի ռեեստրից տրված քաղվածքի հիման վրա:
- Ժողովի օրակարգն է՝
    1. Ընկերության 2024 թվականի տարեկան հաշվետվությունը և ֆինանսական հաշվետվությունը հաստատելու հարցը,
    2. Ընկերությունում 2024 թվականի արդյունքներով շահույթի բաշխում իրականացնելու հարցը,
    3. Ընկերության կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու հարցը:
    4. Ընկերության տնօրենների խորհրդի գործունեության կանոնակարգը նոր խմբագրությամբ հաստատելու հարցը:
- Բաժնետերերին տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցանկը (այսուհետ՝ Ցանկ) հետևյալն է՝
    1. Ժողովի գումարման մասին ծանուցումը,
    2. Տեղեկատվություն Ժողովի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ:
    3. Քվեաթերթիկ՝ օրակարգի հարցերի վերաբերյալ,
    4. Ժողովի հաստատմանը ներկայացվող փաստաթղթերի նախագծերը,
    5. Ընկերության տարեկան ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների վերաբերյալ Ընկերության վերստուգողի և Ընկերության աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը,
- Ցանկի 4-րդ և 5-րդ կետով սահմանված փաստաթղթերը/փաստաթղթերի նախագծերը ներկայացված են https://www.telecomarmenia.am հասցեով Ընկերության ինտերնետային կայքի «Ընկերության մասին» բաժնի, «Բաժնետերերին» ենթաբաժնում:

Հարցերի դեպքում Բաժնետերերը կարող են դիմել Ընկերությանը՝ ուղարկելով նամակ info@telecomarmenia.am էլեկտրոնային փոստի հասցեին:

«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ

«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
YEREVAN OPEN JOINT-STOCK COMPANY
«TELECOM ARMENIA»
02500052
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
REPUBLIC OF ARMENIA
004